Ակադեմիական բարեվարքություն և ակադեմիական ազատություն

դասընթաց՝ հայաստանյան բուհերի դասախոսների համար

Հանրային քաղաքականության ինստիտուտը (ՀՔԻ, https://bit.ly/2O5F4Gv) կազմակերպում է մասնագիտական վերապատրաստման դասընթաց հայաստանյան բուհերի դասախոսների համար՝ **«Ակադեմիական բարեվարքություն և ակադեմիական ազատություն»** թեմայով:

Դասընթացն անվճար է:
Դասախոսություններով հանդես կգան կրթության ոլորտի մասնագետներ և հետազոտողներ:
Դասախոսությունները կուղեկցվեն ունկնդիրների գործնական և ինքնուրույն աշխատանքով:

Դասընթացը տեղի կունենա 2019թ. հունիսի 8 - հունիսի 22 ժամանակահատվածում, յուրաքանչյուր շաբաթ օր (ժամը 12:00-16:00), Երևանում:

Դասընթացի մասնակիցներին կտրվեն մասնակցությունը հավաստող վկայականներ, որոնց հիման վրա բուհերը կարող են հատկացնել մասնագիտական վերապատրաստման կրեդիտներ[1]:

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2019թ. ապրիլի 15-ը** training@ipp.am էլ. փոստի հասցեին ուղարկել.

- Ինքնակենսագրություն (CV),
- Մոտիվացիոն նամակ (առավելագույնը՝ 1 էջ)՝ նկարագրելով դասընթացին մասնակցելու շարժառիթներն ու ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունները:

Դասընթացի անցկացման վայրի և այլ պայմանների մասին ընտրված մասնակիցները կտեղեկացվեն էլ. նամակով, մինչև 2019թ. մայիսի 7-ը:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել +374 60 54 18 47 հեռախոսահամարով:

Կից ներկայացված է դասընթացի նախնական ծրագիրը (հնարավոր են որոշ փոփոխություններ):

[1] Վկայականի հիման վրա կրեդիտ ստանալու հնարավորությունը մասնակիցները պետք է ճշտեն և/կամ համաձայնեցնեն իրենց կրթական հաստատությունների հետ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Հունիսի 8, 12:00–16:00	Դասընթացավարներ
Բուհական ինքնավարություն (4 ժամ՝ դասախոսություն, 6 ժամ՝ գործնական/ինքնուրույն աշխատանք)	**Աննա Գևորգյան** Հանրային քաղաքականության ինստիտուտ **Քրիստինա Ծատուրյան** «Էրազմուս+» բարձրագույն կրթության փորձագետ
Հունիսի 15, 12:00–16:00	
Ակադեմիական ազատություն (4 ժամ՝ դասախոսություն, 7 ժամ՝ գործնական/ինքնուրույն աշխատանք)	**Աննա Գևորգյան** Հանրային քաղաքականության ինստիտուտ **Էդիթ Սողոմոնյան** Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակ
Հունիսի 22, 12:00–16:00	
Ակադեմիական ազնվություն և դրա ապահովման մոտեցումները (4 ժամ՝ դասախոսություն, 7 ժամ՝ գործնական/ինքնուրույն աշխատանք)	**Ավետիք Մեջլումյան** Հանրային քաղաքականության ինստիտուտ **Սմբատ Գոգյան** Բարձրագույն որակավորման կոմիտե